

էին վատնակը եւ ցրուակը լինէին» (89—92) եւ այլն:

«Երկիցս եւ երիցս պարտեցան». կ'ակնարկէ 571—573 տարիներու ընդհարումները. համառ. Եղիշէ. «Երկիցս եւ երիցս զփորձ առեալ կշտամբեցաւ» (66). «յերկուս եւ յերիս կռիւս Տէր ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ» (79):

25. «Այս է, որ գահի հարեալ էի ի սկզբանէ պատմութեան». կ'ակնարկէ Թ. 2 եւ 4 հատուածները: «Ի սկզբանէ» ուղղելու է անշուշտ «ի սկզբանս»: Բնագիրը այս տեղաւ աղճատուած է:

26. Այս հատուածը առնուած է Բ. Թուղթէն. կը համարիմ թէ նախարար այս տեղ կը գտնուէր, փոփոխելով փոփոխուածները: Չեռագրին «զի եւ ոչ նիւթ ինչ ճարտարեալ իմաստութեան համբերեալ կարացից կրկնեալ զգեստ ինչ գովութեան» էմին ուղղած է «իմաստութեամբ համբերել կարացից ի կկել զգգեստ գովութեան». իսկ Շահնազարեան «իմաստութեան իմ համբարեալ կարացից կկել զգգեստ ինչ գովութեան»: «Կկել զգգեստ» ուղղուած է անշուշտ յեցած Ագաթ., Վարդապ., էջ 140 «մինն (ի բուսոց) զգգեստ կկէ, գունակ գունակ ծաղիօք զերկիր զարդարէ ի գունազոյն երանգս». որ կը պատշաճի ճշգրտ. այս դէպքին հարկ է «համբերել» կարգալ «համբարեալ»:

27. «Բանս չորեքնիւթեայ», զոր տեսանք Թ. 25ի մէջ, հաւանօրէն աղերս մ'ունի այս հատուածին հետ: Այս տեղ Եղիշէ կը խոստովանի թէ «ունի» թուական, երկրաչափական, աստեղագիտական եւ բժշկական արհեստներու գիտութիւնը, անոնց կից նաեւ սուրբ-գրեանական ուսմանց հմտութիւնը: Այս արուեստները Հայաստան բերաւ առաջին անգամ Անանիա Շիրակացի. եւ հաւանական է մտածել, թէ Եղիշէ աշակերտած ըլլայ Անանիայի, ինչպէս այլուր ուշադիր ըրած էի (Եղիշէ վարդապետ, Գ., էջ 349—351): Աստղագիտական արհեստին ծանօթութիւնը ցոյց տուած էր Եղիշէ իր Պատմութեան Բ. յեղանակին մէջ (էջ 129—130), ուր կը խօսի Արեգակի մասին: Նաեւ այս տեղ, Թ. 28—31, կը ճառէ հմտօրէն Արուսեակի, Լուսնի եւ Արեգակի մասին. իսկ Վարդապետութեան մէջ կը գրէ խօսելով առաքելներու մասին. «Իսկ արդ ո՞ւմ նմանեցուցից կամ զո՞վ ամէրց տարացոյց. եթէ գամպս ասեմ... եւ եթէ զլուսին ասացից, լուսին ըսու եւ պակասի... եթէ

զաստեղս ասացից, ոչ մի փառս ունին, եւ ոչ միով պայծառութեամբ երեւին. այլ ոմն յուրով եւ ոմն սակաւ, ոմն արուսեակ եւ ոմն գիշերավար...: Աստեղք ոմն ի վեր, ոմն ի վայր, ոմն ի միջի...: Արեգակն իշխանութիւն ունի առուր տուրնջեան...» (էջ 349—350): Նաեւ այս տեղ, Թ. 28—31, կը ճառէ հմտօրէն Արուսեակի, Լուսնի եւ Արեգակի յատկութիւններու մասին, ուր յայտնապէս կը տեսնուի, թէ ան ծանօթ է Անանիայի Տիեզերագրութեան (համառ. Լուսնի եւ Արեգակի մասին՝ Անանիայ Շիրակուցի Մնացորդք բանից, Պետերբուրգ 1877, էջ 49—62):

34. «Եհաս լուր առաքինութեան քո յԱրեւելից մինչեւ ի Գաղերոջն (Չ. Գաղաբոջն), ի հարաւոյ մինչեւ ի հիւսիս»: Եղիշէ (էջ 55) առ Յուստինոս կայսր գրուած Թղթին մէջ ունէր տեղեքս. «ունելով զՆերոպէ՝ անցին եւ տիրեցին եւ Ասիացուցն ի սահմանացն Սեթայ (տպ. Սերայ) մինչեւ ի կողմանս Գաղերոջն», այս ինքն «ի կողմանս հարաւոյ»: Երկու դէպքին ալ նկատի առնուած է Հիւրդիտոսի Ժամանակագրութիւնը, ուսկից է. «յիսիսիւրայ մինչեւ ի Գաղերոջն կողմն հարաւոյ» (Անանուս Ժամանակագրութիւն, էջ 4. համառ. Ակինեան, Եղիշէ, Գ., էջ 67 եւ 388):

«Գրեցաւ անուն մարտիրոսութեան քո յոսկի տախտական ընդ առաքելայն եւ ընդ նախալկայն, ընդ հայրապետս եւ ընդ եպիսկոպոսն, միանգամայն եւ ի դպրութեան կենացն եւ ի յերկինս»:

«Ոսկի տախտակք» այն երկփեղկ տախտակներն յն. τὰ διπτυχα, diptyques, Diptychen) են, որոնց վրայ կը գրէր հին Եկեղեցին իր եպիսկոպոսներու, կենդանի եւ հանդուցեալ բարերարներու, մարտիրոսներու եւ խոստովանողներու անունները եւ կը յեշտր գանոնք սուրբ պատարագի Ժամանակ պատարագի կողմէ, թելադրութեամբ սարկապէս<sup>1</sup>: Դիպտիքոնները կ'ըլլային փայտեայ, մետաղեայ (ոսկի, արծաթ), նաեւ մագաղաթեայ<sup>2</sup>: Եղիշէ հոս «Ոսկի տախտակք» կը կոչէ գայն, այլուր նաեւ «Յիշատակարան» եւ «Բնագիրք»: Ունիք վկայութիւններս. Փաւստոս Գ. 11. «Յորժամ գա-

<sup>1</sup> Համառ. «Առաքելոց սրբոց...» քարոզին մէջ. «... եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք» (Գաթրքեան, Սրբազան Պատարագամտոյցը Հայոց, էջ 688—693):  
<sup>2</sup> Dippel, Diptychen: Kirchenlexikon, 3. (1884 Freiburg) 1813—1817.

նուանս Սրբոցն կարգիցեն»: Գ. Փարպ. 5. Աղան Արծրունի «եղեալ ի Մատրանն ի Հաղամակերտի. որոյ յիշատակարանն ընդ անուանս վկայիցն սրբոց պատմեալ քարոզի մինչեւ ցայսօր»: Եղիշէ. «Բնագրօք յիշատատակեցան նոքա (նախարարք կապեալք) եւ ոչ մի տօնք տարեկանաց ոչ ամին զնոսա ի հեռաստանէ» (158): «Ոչ յիշեցաւ անուն նորա (Վասակայ) ի մէջ Սրբոց եւ ոչ մատեալ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցոջն» (109)<sup>3</sup>: Այսպէս նաեւ 571ի կռուին մասնակիցներու անունները արձանագրուած են իրրեւ յիշելի Յայտնութեան տօնին. «Ամենայն եպիսկոպոսունք եւ երեցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին... զտօն պատերազմացն յաղթութեան խառնել ի սուրբ տօն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին» (62): Բաց աստի Եղիշէ կը գրէ ճառօրէն զրուստիքը զօրավարի մը, որ թէեւ չէ նահատակուած, բայց ընդունած է նահատակի պակար իր առաքինի վարքովը, «քանզի բաղմաղիմ է նահատակութեանդ անուն» (Նախարան, 6):

32. Ուշադրութեան արժանի է հոս կոչուած Մատթէի Աւետարանին ԺԹ. 29էն. որուն մասին ակնարկութիւն ըրինք վերագոյն: Յայտնապէս «Վաչէի» հրատարակման յաշխարհէ կ'ակնարկէ:

37. Այս հատուածը առնուած է Բ. Թուղթէն: Տեղոյս կը վերաբերի, փոփոխելով փոփոխուածները: Չեռագրին «արդ աղաչեմ փոխանակ ասեմ» ուղղեցի «եւ փարեի ասեմ». փոխառութիւն մըն է Գասականներէ. համառ. Ոսկ. Մատթ. Ա. 168 «այլ աղաչեմ եւ փարելի ասեմ». նոյնպէս Ոսկ. Պաւլ. Ա. 652, 714 եւ այլն:

Մեր քննութիւնը կը յանգի կորակացութեանս.

ա. Գիւտ եպիսկոպոսի երկու թուղթերը կեղծիք են:

բ. Թուղթերու խմբագիրը տրամադրութեան տակ ունեցած է Եղիշէի Հայոց պատերազմի Պատմութեան վերջարանը:

գ. Այն ճարտասանական նախակրթութիւն մըն է, գրուած Եղիշէէն:

<sup>3</sup> Համառ. Հ. Յ. Գաթրքեան, անդ, էջ 102, ծան. 3:

(Շարունակելի:) 2. Գ. ԱԿԻՆԵԱՆ

ՄԸՏԹԷՈՍ ՈՒՌՀՇՅԵԹ\*

Մատթէոսի Ժամանակագրութիւնը կը բաժնուի երեք մասի կամ գլխիքի, եւ ամէն մէկ գլխիքը հատուածներու: Առաջին գլխիքը կը սկսի Հայոց ՆԱ եւ Քրիստոսի 952 թուականէն եւ կը հասնի մինչեւ Քրիստոսի 1052 եւ Հայոց Շ թուականը՝ պարունակելով իր մէջ հարիւր տարուան պատմութիւն: Երկրորդը կը սկսի Հայոց ՇԲ եւ Քրիստոսի 1053 թուականէն եւ կը հասնի մինչեւ Հայոց ՇԾ եւ Քրիստոսի 1102 թուականը՝ պարունակելով գրեթէ 50 տարուան պատմութիւն: Իսկ երրորդ գլխիքը կը սկսի այս թուականէն եւ կը հասնի Հայոց ՇՁ եւ Քրիստոսի 1137 թուականը՝ պարունակելով երեսուն տարուան պատմութիւն: Ուրեմն Մատթէոսի պատմութիւնը կը պարունակէ ընդ ամէնը 180 տարուան պատմութիւն՝ սկսելով Քրիստոսի 952 թուականէ եւ հասցնելով մինչեւ 1137: Բովանդակ առաջին գլխիքը՝ 100 տարուան պատմութիւն՝ Մատթէոս՝ ինչպէս ինքն ալ կ'ըսէ, քաղած է Ժամանակակից անձերէ եւ հին դերքերէ. ահա իր խօսքերը. «Արդ մինչեւ ցայս վայրս բազմաջան եւ աշխատաւոր քննութեամբ գտեալ զրեցաք զչարագրական գրեալս զհարիւրից ամաց, զորս ի բազում Ժամանակաց հետաքննեալ հասու եղաք: Ընդ այնքանեաց տեսողացն եւ լսողացն որք էին ի հին ամաց ծնեալք, եւ ընդ ընթերցողսն յառաջին պատմագրացն՝ որք ակնատեսք էին լեալք ամենայն եղելոցս» (Մատթ. Ուս. 1, էջ 133. տիպ Երուս.): Մատթէոսի մեծ փափաքն էր արդէն գրել իր Ժամանակի պատմութիւնը՝ որպէս զի այն ամէն դէպքերն ու պատահարները չկորսուին, չմոռցուին. «Չայս ամենայն յօժարեցի ի տեսութիւն եւ ի մատենագրութիւն ամէլ զրով, վասն զի մի ի շարաշար դատութեան Ժամանակն (= ժա-

\* Յօդուածս, ինչպէս յիշած եմ վարք. էջ 451, անգրանիկ բանասիրական գրուածքն է Հ. Անտեսի, ուղարկուած խմբագրութեան 1896 յունուարին, բայց մնացած անտիպ: Յարգելու համար իր յիշատակը կը հրատարակեմ զայս պիտի անփոփոխ: Յօդուածագրին անձանօք մնացած են Է. Ուտարի ի ուսումնասիրութիւնները ի մասին Մ. Ուտարիցայ: Հետաքրքրական են իր տեսութիւնները պնու մանուանդ, որ 1896էն հոկտ. 1913 չէ տեսած մատենագրիս մասին որ եւ է նոր ուսումնասիրութիւն: Անտեսի կատարած է մանր սրբագրութիւններ Ուտարիցայ Տարեգիրքին մէջ (Արարատ 1913, էջ 1144—1150) եւ Քննութիւններ Տարեգիրքիս մէջ երեւան եկած նոր բաներու (Բազմալիպ 1919, էջ 125—126, 149—151):

խմբագր. «Հանդէս Ամսօրեայ»ի:

մանակին) կորեցէ այս ամենայն եւ մուսայի ... թողի զայս ի յիշատակ սիրողաց ժամանակագրութեանց» (էջ 134): Ուստի երկար ժամանակ աշխատեցաւ այս գործին «բազմաջան եւ աշխատաւոր քննութեամբ»:

Մատթէոսի պատմութեան Գ. գրքին Ա. հատուածին մէջ (էջ 340) կը կարգանք. «Եւ այս եղև ի հայրապետութեանն Հայոց տանն տէր Գրիգորիսի եւ տեառն Բարսեղի, յորժամ եղև առաջին սկիզբն երկրպագութեան»: Արդ՝ այս վերջին բառն ապահովապէս սխալ է եւ պէտք է ըլլայ երկասիրութեան՝ ինչպէս որ Մատթէոսի պատմութեան հրատարակիչներն ալ այն դիտողութիւնը կ'ընեն (էջ 569). քանզի այս խօսքին մէջ երկրպագութեան ինչորէ չկայ, այլ բուն իսկ երկասիրութեան վրայ կը խօսի հեղինակը: Նոյն սխալը կը տեսնենք նաև երեք թուղթ յետոյ (էջ 347). «Ձոր դարձեալ սկսաք երկրպագութեանց՝ ըստ երանելի վարդապետին Գրիգորի Նիւսացւոյ». ուր յայտնի է թէ բառը պիտի ըլլայ երկասիրութեանց:

Արդ՝ եթէ այս ընթերցումն միտ դնենք՝ պիտի իմանանք թէ Մատթէոս առաջին գիրքը գրել սկսաւ Գրիգորիսի եւ Բարսեղի հայրապետութեան ժամանակ: Ո՞վ է այս Գրիգորիսը: Պատմութեան այն շրջանին մէջ՝ ուր կը գրէ Մատթէոս իր ժամանակագրութիւնը, հետզհետէ կը յաջորդեն Գրիգոր անունով քանի մը կաթողիկոսներ. այսպէս՝

- 1058 Խաչիկ Բ. 1165 Ներսէս Գ.
- 1065 Գրիգոր Բ. 1173 Գրիգոր Գ.
- 1082 Բարսեղ Ա. 1193 Գրիգոր Ե.
- 1113 Գրիգոր Գ. 1195 Գրիգոր Զ.

Բայց որովհետեւ Գրիգորիս կը յիշուի Բարսեղի հետ միասին եւ որովհետեւ Մատթէոսի ժամանակագրութիւնը կը հասնի մինչև 1137, սոյն Գրիգորիսը կրնայ ըլլալ միայն Գրիգոր Բ. կամ Գրիգոր Գ. միւսները բոլոր կը մնան 1137 թուականէն անդին:

Մատթէոս իրեն ժամանակակից կը յիշէ նաև Յունաց Ալեքս կայսրը (1081—1118), Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկիոյ (= Նիկիոյ Գ. 1084—1111), Անտիոքի հայրապետ Յովհաննէս (Գ. կամ Ե.), Ասորոց Հայրապետ Աթանաս (= է. 1090—1129), Երուսաղէմի հայրապետ Սիմէոն (Բ.) (1094) եւ Աղեքսանդրիայի հայրապետ Յովհաննէս: «Եւ ի նոյն հայրապետութեան տեառն Գրիգորիսի

եւ ի թագաւորութեան Յունաց Ալեքսին դարձաք յօժարական մտօք եւն» (էջ 346):

Ուստի՝ Մատթէոսի պատմութեան սկզբնաւորութեան թուականը կը գտնուի 1065—1165. բայց այս հարիւրամեայ շրջանին մէջ՝ երկու թուական միայն կրնան յարմարիլ Մատթէոսի յիշած պայմաններուն. այն է կամ 1082 եւ կամ 1113: Որովհետեւ Գրիգորիսի (Բ. կամ Գ.) եւ Բարսեղի ՄԻԱՄԻՆ յիշուելը կը ցուցնէ թէ Մատթէոս գրել սկսած է ա՛յն տարին որ Գրիգոր Բ. կը վախճանի եւ Բարսեղ Ա. կը յաջորդէ՝ 1082 (եթէ յիշուած Գրիգորը՝ Գրիգոր Բ. ն է). եւ կամ ա՛յն տարին որ Բարսեղ Ա. կը վախճանի եւ Գրիգոր Գ. կը յաջորդէ՝ 1113 (եթէ յիշուած Գրիգորը՝ Գրիգոր Գ. ն է): Այս երկու թուականներէն դուրս ուրիշ ինչ թուականի մէջ ալ որ սկսած ըլլար Մատթէոս՝ չպիտի կրնար ըսել թէ Բարսեղի եւ Գրիգորիսի (միասին) ժամանակ սկսայ:

Մատթէոս առաջին գրքին համար աշխատեցաւ 8 տարի. «Ձուք ամ անհանգիստ քննութեամբ կացի, եւ զայս ամենայն յօժարեցի ի տեսութիւն եւ ի մատենագրութիւն անկ գրով» (էջ 134): Ուրեմն երկրորդ գիրքը գրել սկսաւ 1090ին կամ 1121ին. այս գրքին համար ալ աշխատեցաւ 7 տարի, ինչպէս կը հետեւցուի իր մէկ խօսքէն. «Արդ զայս ոչ ոք է կարող անել զոր ինչ մեք արարաք, զի զոր ինչ գրեցաք՝ գրեցաւ. զի գամ հնդեառան ունէաք զայս գործ քննութեանս» (էջ 344): Այսինքն թէ 15 տարի աշխատեցաւ բովանդակ պատմութիւնը մինչև այնտեղ հասցնելու համար՝ առաջին երկրորդ գիրքերը յօրինելու համար. արդ՝ քանի որ գիտենք առաջինին գրութեան տեսողութիւնը՝ 8 տարի, կը հետեւի թէ երկրորդին համար աշխատած է 7 տարի: Ուրեմն երբ աւարտեց առաջին երկու գիրքերը՝ Քրիստոսի 1097 կամ 1128 թուականն էր:

Հոս գիտենք թէ Մատթէոս 1097ին գրած աւարտած պիտի ըլլայ երկրորդ գիրքը՝ որ կը հասնի մինչև 1102. այս անկարելի է. ուրեմն անկարելի է նաև որ Մատթէոս սկսած ըլլայ 1082ին: Կը մնայ միայն 1113:

Այնուհետեւ Ուոհայեցին 10 տարի կը զազրի գրելի. «Եւ յայսմ տեղով լուեալ դադարէաք ի յարուեստաւոր քննութեանէս մերմէ ... գամս տանն ոչինչ արարաք հոգս վասն այս ժամանակագրութեանս. եւ թողեալ էաք ի բացեայ դարուեստ գրչութեանցս» (էջ 340—

341): Բայց յետոյ տեսնելով թէ ոչ ոք ջանք չ'ընեն ժամանակակից դէպքերը պատմելու, վերստին սկսաւ գրել Քրիստոսի 1138 թուականին: Արդ՝ Ա. եւ Բ. գրքերը կը հասնէին մինչև Հայոց ԾԾ եւ Քրիստոսի 1101 թուականը. Մատթէոս պէտք էր շարունակէր այս տեղէն եւ բերէր նախ մինչև 1128՝ որ էր գրութեան աւարտած ժամանակը՝ ճիշդ 27 տարի. յետոյ այդ թուականէն եւս շարունակել եւ զալ մինչև 1137 թուականը՝ այն է ընդամէնը 36 տարի. «Այսպիսի օրինակաւ եւ մեք դարձցուք ի մեր թողեալ կէտ գրոյն, եւ գտաք զնարան գառաջինն զոր թողեալ էաք, յորժամ էր ի յամս ԾԾ: Եւ արդ սկսաք ստել այլ եւս ամաց քսան եւ եօթանց, եւ երեսուն՝ լիցի վճարուին գրոցս» (էջ 345):

Այս է ճիշդ եւ ուղիղ հաշիւը՝ որու համաձայն կու գան Մատթէոսի բոլոր խօսքերը եւ բոլոր յիշած թուականներն ու անձերը (Գրիգոր, Բարսեղ եւ Ալեքս): Անհամաձայն է միայն վերի «Եւ երեսուն՝ լիցի վճարուին գրոցս» խօսքը՝ փոխանակ 36ի. ասոր համար ալ հաստատ կերպով կրնանք ըսել թէ փոքրիկ սխալ մըն է: Կրնայինք անշուշտ մտածել նաև թէ Մատթէոս երրորդ գիրքը գրել սկսած ատեն մտադրած ըլլար պատմութիւնը մինչև 1131 հասցնել. այսպէսով անհամաձայնութիւնը պիտի վերնար: Միայն այս բնական չէ: Հարկ էր որ Մատթէոս՝ երրորդ գիրքը գրել սկսած ատեն՝ նպատակ դրած ըլլար պատմութիւնը հասցնել մինչև 1137՝ որ էր երրորդ գիրքը գրել սկսած թուականէն անմիջապէս առաջի տարին

(Հոս աւելցնենք նաև թէ թուականներուն մէջ մէկ տարուան տարբերութիւնը տոմարական տարբերութիւն է:)

Ուոհայեցին հրատարակիչները՝ չկարենալով ընել այս հաշիւները՝ կը գրեն թէ սխալ կայ այս խօսքերուն մէջ. «Ի թուականութիւնս ամացն նշմարին վրիպակք մուծեալ ի գրչաց, կամ ի նորին իսկ հեղինակին անդգուշութենէ» եւն եւն (էջ 570, ծան. 211):

Ասոնցմէ վերջ՝ քանի մը դիտողութիւններ ունիմ ընելիք. նախ պէտք է ջնջել, էջ 135 ՀԶ հատուածին վերջին պարբերութիւնը. «Նա այլ եւս ունիմք ասել ձեզ ամաց ութանից զաշխատութենէ Մատթէոսի Ուոհայեցւոյ եւ վանաց երիցու»: Այս խօսքը բուն հեղինակէն չէ, այլ օրինակողէ մը աւելցուած է. որովհետեւ Մատթէոս այդ մասերը գրած ժամանակ չէր գիտեր թէ պիտի հասցնէր

մինչև 1137՝ թէ 80 տարուան պատմութիւն եւս պիտի գրէր. այլ իր նպատակն էր միայն 50 տարի եւս շարունակել. ինչպէս որ վերն ալ տեսանք թէ այդ տեղ հասնելէ վերջ՝ դադրած էր այլ եւս գրելի. եւ՝ տասը տարի վերջ միայն շարունակել ուզած էր: Նոյն իսկ խօսքին ձեւը կը յայտնէ թէ յաւերած է. քանզի երրորդ դէմքի վրայ կը խօսուի. մինչ անկէ անմիջապէս առջի նախադասութեան մէջ՝ առաջին դէմքով. «Ձոր ընկալաք ըստ արժանեաց մերոց զհատուցուին»:

էջ 340՝ ճՀԱ հատուածին սկիզբը՝ ի յամի հինգ հարիւրերորդի եւս պէտք է իմանալ կամ կարգալ ի յամն (= մինչև ցամն) եւն: Ձեռագիրներուն մէջ կը գրուի. «Ի յամի Դձերորդի եւ Մերորդի», ինչպէս կը տեսնենք ծանօթութեան մէջ, մինչ յայտնի սխալ է՝ ինչպէս ծանօթութիւնն եւս դիտել կու տայ (էջ 569, ծան. 205):

էջ 341 եւ էջ 347 երկրպագութեանց բառերը պէտք է կարգալ երկասիրութեանց. այս մասին տես վերը:



Մատթէոսի կեանքին վրայ չունինք բաւական տեղեկութիւն. միայն իր գրքէն եւ իր պատմածներէն յայտնի է թէ Ուոհայի մասին պատմածները շատ մանրամասն են. այսպէս Յովհաննէս Քարափնեցիին մահուան համար գրածները՝ թէ «Արարին ժողով զամենայն քաղաքն Ուոհայ ի վերայ նորա. եւ մեծաւ հանդիսիւ թաղեցին զնա ի դուռն սուրբ եկեղեցւոյ իւրոյ՝ ի հիւսիսեան կողմն քաղաքին, իրբեւ նետնկէց մի հեռի ի պարսպէն» (էջ 273): Նոյնպէս Գրիգորիսի թուղթը՝ զոր գրեց Ուոհայեցիներուն՝ ամբողջ մէջ բերելը եւն: էջ 342՝ Մատթէոս յայտնապէս կ'ըսէ իր բնավայրը. «Ի քաղաքս Միջագետաց յՈւոհայ, ժողովեալ գրեցաք մինչև ցայս վայր եւն»:

Նաև գիտենք թէ Մատթէոս վանական է, ինչպէս կը ցուցնէ էջ 134. «Եւ վասն այսորիկ Մատթէոս Ուոհայեցի եւ վանական՝ զաշխատութեանս զգործ իմ ոչինչ համարեցայ եւն»: Բայց էջ 135՝ նախաբանին վերջին հատուածը՝ ուր Մատթէոս կը յիշուի իրբեւ «վանաց երէց», ինչպէս որ վերն ալ ցուցուցինք՝ յետոյ յաւելեալ է եւ մեզ համար կարեւորութիւն չունի:

Փարիզ, 1896 Յունուար 7/19:

Հ. Յ. ԱՃԱՌԵԱՆ